

ՄՈՒՇԵՂ ՎՐԴ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ 1875 - 1943

1943 Դեկտ. 20-ին Ս. Արթուր կորսնցուց իր վասակաւոր Միաբաններէն Մուշեղ Վրդ. Հայրապետեանը՝ Հանգուցեալը ծնած էր 1875-ին Նեղեկա, ապա իր ծնողաց հետ Պոլս եկած։ Իր նախնական կրթութիւնը ըստացած էր Կ. Պոլսոյ Նէսի-Դուլիի ազգ. ուսումնական մէջ։ Զափառաւ ըլլալէն վերջ ժամանակ մը զբաղած է առեւտրական գործով։ Համիտեան սարսափեալութենէն կ'ապաստանի ճախ Պուլկարիա, ժամանակ մը վերջ կուգայ Ս. Արթուր եւ կը միաբանի Նուսադէմի վանքին։ 1909-ին Վարդապետ կը ձեռնադրուի եւ կը դրկուի Յոպպէի վանք իբրեւ ժամաւոր ուր կը մնայ մինչեւ 1918։ Վարած է նաեւ Ս. Փրկչի եւ Ասուածամօր զոյգ տաճարները միաժամանակ 1923-1930 եւ 1925-ին եղած է անդամ Տնօրէն Ժողովոյ։ Վերջին տարիներուն իր տնտեսական պատշաճութեամբ հրաժարած էր պատշտական գործերէ, եւ կը կատարէ խոստովանածօր պատշտօնը։

Հանգուցեալը տարիներէ ի վեր կը կատարէ Նոյնյաւ Լուսահանութեան պատշտօնը Ս. Յարութեան Տնօրէնի մէջ՝ Զատիկ նախնորդ օրը Լուսահանութեան մէջ հանդէսին։

Մուշեղ Վրդ. Հայրապետեան հաղորդաբար էր եւ ունէր ազնիւ բնավորութիւն, անոր հոմար սիրուած էր անխաբի բոլորէն։ Բարեսէր եւ առաստանդ էր եւ իր խնայած դրամէն բաժին կը հասնէ բոլոր իրեն դիմողներուն։

Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ օր, օժուժը կատարեց Լուսարարապետ Գեորգ Տ. Կիրեղ Մ. Վրդ. Իսրայէլեան եւ խօսեցաւ յովիչ ու օրհագրաւ դամբանական մը, վեր առնելով հանգուցեալին մէջ մարդու եւ մանաւանդ կրօնաւորի առաքինութիւնները, որոնք երբեք չպակսեցան բարեյեւասակ Մուշեղ Վրդ. Հայրապետեանին։

Ս. Մուշեղ Վրդ. կը մեռնի իր պարտքը կատարած Միաբանի մը լայն գոհունակութեամբ եւ արդիւնաւորութեամբ, սիրուած քի իր Միաբանակից եղբայրներէն եւ քի ժողովուրդէն։ — Հանգիստ իր բարի հոգիին։

ԽՈՐԷՆ ՎՐԴ. ՓՈՍԹՈՅԵԱՆ 1879 - 1944

1944 Փետր. 23-ին իր յաւիտեական հանգիստը մտաւ Ս. Արթուր Միաբաններէն Խորեն Վրդ. Փոստոյեան։ Հանգուցեալը ծնած էր 1879-ին Բարձր Հայք, Քղի։ Իր նախնական ուսումը առած է Ս. Արթուր Ժառանգաւորաց Վարժարանի մէջ (1893-1900)։ Վարդապետ ձեռնադրուած է 1909-ին, օծակիցն ըլլալով Մուշեղ Վարդապետին։ Վարած է երկիցս Բերդեմի Սուրբ Մենդեան վանուց տաճարները։ Վարած է նաեւ Սուրբ Յարութեան Տնօրէն տաճարները, եղած է մասնակարար, եւ իր վերջին տարիներուն կը վարէր Ս. Փրկչի եւ Ս. Ասուածամօր զոյգ տաճարները։

Խորեն Վարդապետ զուարթաբար էր բարեմիտ էր. իր մահով Մերոց Յակոբեանց Աթոռը կը կորսնցնէ պատշտօնաւոր եւ գործունէալ անդամ մը։

Հանգուցեալը վերջիններէն է առաջին մէջ պատերազմէն առաջ պատշտուած տնօրէնիցին, որ նուիրուով ծառայեց այս Աթոռին եւ ուրախութեամբ ուզեց քաղուիլ անոր հովանիին ներքին։

Մեռաւ իր անուան տօնին, Վարդանանց օրը։ Դամբանականը խօսեցաւ օրուան պատարագիչ՝ Հոգ. Տ. Նիկիտէ Վրդ. Տեառնեանը։ — Խորեն Վրդ. կը մեռնի իր Միաբանի պարտքը կատարողի մը գոհունակութեամբ։

Հանգիստ իր հոգիին։

